

# **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

## **ԳՐԻՇԱ ԳԱԳԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

### **ԱՆԳԼԵՐԵՆ ՏԵՔՍԱՅԻՆ ՈՐՄՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼ**

Ժ.02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2022**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆեսոր Ե. Լ. Երզնկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ա. Սիմոնյան  
ք.գ.թ., դոցենտ Լ. Ա. Բադալյան

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. փետրվարի 16-ին՝ ժամը 11:00-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. հունվարի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար ք.գ.թ., դոցենտ՝



Լ. Ա. Վարդապետյան

Հաղորդակցությունը որպես մարդու կենսագործունեության կարևորագույն նախապայման գիտության տարբեր ճյուղերի քննության առարկան է: Լեզվաբանության բնագավառում հաղորդակցության ուսումնասիրությունը եղել և մնում է մասնագետների հետազոտական առաջնահերթություններից: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական իրադարձությունները, անձնական և հանրային խնդիրներն իրենց տեքստային և պատկերային արտացոլումն են գտնում մեզ շրջապատող պատերի և այլ հանրային մակերևույթների վրա: Այսօրինակ գրառումների միջոցով մարդիկ ձգտում են իրենց հուզող հարցերը լսելի դարձնել հանրային տարբեր շրջանակներում և այլ մարդկանց հաղորդակից դարձնել իրենց մտքերի հետ:

Սույն ատենախոսությունը նվիրված է որմնագրային խոսույթի համակողմանի ուսումնասիրությանը: Այն աշխատանքում դիտարկվում է որպես լեզվական և արտալեզվական միավորներով կազմված տեքստերի համալիր համակարգ՝ ուղղված հասարակության տարբեր շերտերի միջև որոշակի հաղորդակցության հաստատմանը: Որպես հիմք ընդունվում է այն դրույթը, որ որմնագրային խոսույթը առավելապես միտված է համոզելու լսարանին արտահայտված մտքերում և հաղորդակցական ազդեցություն ունենալու նրա վրա:

Ատենախոսության **նպատակն** է ուսումնասիրել անգլալեզու որմնագրային խոսույթը ձևավորող և համոզման գործառույթը ապահովող լեզվական և արտալեզվական միջոցները, վեր հանել որմնագրային հաղորդակցության մոդելի կառուցման և գործարկման առանձնահատկությունները:

Այս նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- Հանգամանալից քննության ենթարկել որմնագրության ուսումնասիրությանը նվիրված տեսական աշխատանքները և վեր հանել որմնագրությունը որպես լեզվական երևույթ դիտարկող հետազոտությունների զարգացման հիմնական միտումները:
- Դիտարկելով որմնագրությունը որպես համոզման գործառույթ իրականացնող խոսույթ՝ այն քննության ենթարկել. ա) լեզվի գործառույթների համատեքստում, բ) Արիստոտելի կողմից առաջադրված համոզման ռազմավարությունների տեսանկյունից և գ) խոսույթի քննադատական վերլուծության լույսի ներքո:
- Վեր հանել իմաստաստեղծման գործընթացում կիրառվող լեզվական և արտալեզվական միջոցներն ու եղանակները, բացահայտել վերջիններիս իմաստային և գործառական առանձնահատկությունները, դասակարգել դրանք համապատասխան լեզվական մակարդակներում:
- Առաջարկել որմնագրային տեքստերի վերլուծության համալիր մեխանիզմ, որը կարտահայտի որմնագրային նմուշը ձևավորող միջոցների ներքին կապակցվածությունը միմյանց հետ:

- Առաջադրել որմնագրության միջոցով ձևավորվող հաղորդակցության մոդել, վեր հանել առաջադրվող մոդելի կառուցվածքային առանձնահատկությունները:
- Բացահայտել որմնագրային հաղորդակցության մոդելի կառուցվածքային փոփոխությունները պայմանավորող գործոնները:

Որմնագրությունը դինամիկ զարգացող երևույթ է՝ պայմանավորված նրա ստեղծման հիմքում ընկած սոցիալ-քաղաքական և անձնական խնդիրներով: Այս իսկ պատճառով, որմնագրության բովանդակային դաշտը շարունակաբար ընդլայնվում է, մեծանում է այն գիտական ուսումնասիրության ենթարկելու ձգտումը: Ներկայումս որմնագրության զանազան նմուշների ստեղծմանը զուգահեռ՝ լեզվաբանության բնագավառում հարաճող հետաքրքրություն է նկատվում որմնագրությունը դիտարկելու որպես լեզվական յուրօրինակ երևույթ: Ատենախոսության **արդիականությունը** պայմանավորված է որմնագրությունը որպես զանգվածային հաղորդակցության միջոց դիտարկելու և խոսույթը ձևավորող լեզվական և արտալեզվական միջոցների իմաստագործաբանական առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Ժամանակակից լեզվաբանության ոլորտում իրականացվող հետազոտությունները առավելապես միտված են դիտարկելու որմնագրային խոսույթի թեմատիկ առանձնահատկությունները, որոշակի ֆիզիկական կամ սոցիալական համատեքստի հետ դրա ունեցած բովանդակային կապերը, ինչպես նաև վերլուծելու խոսույթը ձևավորող լեզվական միջոցներն ու հնարները և հաղորդակցության տարատեսակ եղանակների կիրառումն այս խոսույթում: Սույն ատենախոսության **գիտական նորույթը** պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջին անգամ փորձ է արվում համապարփակ իմաստագործաբանական քննության ենթարկել անգլալեզու որմնագրային խոսույթը. չսահմանափակելով որմնագրության առանձին նմուշների ուսումնասիրությունը որևէ սոցիալական կամ ֆիզիկական համատեքստով՝ վեր են հանվում որմնագրային խոսույթը ձևավորող իմաստաստեղծման միջոցները, կառուցվում է հաղորդակցական այն մոդելը, որը բնորոշում է որմնագրությունը որպես հաղորդակցության յուրահատուկ միջոց: Որմնագրային հաղորդակցության մոդելի կառուցումը կարելի է համարել մի յուրօրինակ զարգացում ժամանակակից հաղորդակցության տեսության մեջ, որը ներառում է *ազդեցությունը*՝ որպես հաղորդակցական մոդելի առանցքային բաղադրիչ և որմնագրային նմուշի ստեղծման հիմքում ընկած դրոպապատճառների և նպատակների վերհանման ելակետ:

Հետազոտության **առարկան** որմնագրային խոսույթն է որպես հասարակության տարբեր շերտերի միջև հաղորդակցություն ապահովող միջոց՝ իրեն հատուկ իմաստակառուցվածքային և գործաբանական առանձնահատկություններով:

Հետազոտության **օբյեկտը** անգլալեզու որմնագրության առանձին նմուշներն են՝ վերցված ամենատարբեր ֆիզիկական և սոցիալական համատեքստերից:

Ատենախոսության մեջ առաջադրվող խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ **մեթոդները**՝ տեքստային վերլուծության, համատեքստային վերլուծության, խոսույթի քննադատական և բազմաեղանակային վերլուծության մեթոդները, ինչպես նաև ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները՝ որպես գիտական ուսումնասիրության ընդհանուր մեթոդներ:

Ուսումնասիրության համար որպես **մեթոդաբանական հենք** են ծառայել խոսույթի քննադատական վերլուծության (Ն. Ֆեյրքլաֆ, վան Դեյք, Ռ. Վոդակ, Մ. Ռեյզիգլ, Ֆ. Ռահիմի, Մ. Ռիասատի), խոսույթի բազմաեղանակային վերլուծության (Գ. Քրեսս, Վ. Լյուվրն, Բ. Ջյուիթ, Ռ. Սքոլլըն, Ս. Վ Սքոլլըն), իմաստաբանության և գործաբանության (Ա. Վեթրիցկա, Ի. Ի. Սվիթսեր, Ա. Բ. Լեվինսոն, Յու. Նայդա) տարբեր տեսություններ և մոտեցումներ, հաղորդակցության տեսության (Կ. Շենըն, Վ. Ռիվլըր, Թ. Փիլլըս, Ա. Մ. Քորի, Ջ. Դըվիթթ, Վ. Շրեմ), լեզվի գործառույթների տեսության (Կ. Բյուլեր, Ռ. Յակոբսոն, Մ. Չակոբսկայա, Յ. Մուկարժովսկի), ինչպես նաև որմնագրային խոսույթի լեզվական հայեցակերպին անդրադարձած հեղինակների առաջադրած տարբեր մոտեցումներ (Ջ. Ստեմփոյլիդիս, Ն. Ալ-Քվալդա, Է. Քիթիս, Ֆ. Մվանգի և ուրիշներ):

Աշխատանքի **տեսական նշանակությունն** այն է, որ հետազոտության արդյունքներն արժևորում են որմնագրությունը որպես լեզվական երևույթ և որպես զանգվածային հաղորդակցության միջոց: Աշխատանքի ընթացքում մշակված դրույթները կարող են իրենց նպաստը բերել հաղորդակցության տեսության, տեքստի լեզվաբանության, գործառական ոճագիտության ոլորտներում իրականացվող հետազոտություններին՝ որմնագրային խոսույթի լեզվական հայեցակերպին վերաբերող խնդիրների պարզաբանման, ինչպես նաև հաղորդակցության տեսական իմաստավորմանը վերաբերող ուսումնասիրություններում նոր ուղղությունների զարգացման համար:

Հետազոտությունն ունի **գործնական արժեք**. ուսումնասիրության արդյունքները կարող են արդյունավետորեն կիրառվել իմաստաբանության, բառագիտության, գործաբանության, տեքստի լեզվաբանության, հանրալեզվաբանության, գործառական ոճագիտության, ընդհանուր լեզվաբանության դասընթացներում, գործնական պարապմունքներում, դասախոսություններում և սեմինարներում, ինչպես նաև լեզվաբանության բնագավառում գիտական հոդվածներ, ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր գրելիս:

Որպես հետազոտության **փաստական նյութ** են ծառայել անգլալեզու տեքստային (ինչպես նաև տեքստային/պատկերային) որմնագրային նմուշները (շուրջ 4000 միավոր), որոնք վերցված են ամենատարբեր սոցիալական և ֆիզիկական համատեքստերից: Որմնագրային նմուշները հավաքագրվել են

ինչպես համացանցից, այնպես էլ ժամանակի ընթացքում սույն աշխատանքի հեղինակի կողմից ստեղծված անձնական շտեմարանից:

Պաշտպանության են առաջադրվում հետևյալ դրույթները՝

- Որմնագրային տեքստի ստեղծումը, անկախ հանգամանքներից և հեղինակի նպատակադրումներից, ենթադրում է որոշակի հաղորդակցական գործընթաց մի կողմից անհատի (կամ անհատների առանձին խմբերի), մյուս կողմից ողջ հասարակության միջև:
- Որմնագրային տեքստն առավելապես միտված է համոզել ընթերցողներին արտահայտած գաղափարներում և հաղորդակցական որոշակի ազդեցություն ունենալ նրանց վրա:
- Որմնագրային տեքստն ունի հստակ կառուցվածք՝ կազմված լեզվական և արտալեզվական միավորներից, որոնցից յուրաքանչյուրը կատարում է որոշակի դեր իմաստաստեղծման գործընթացում:
- Որմնագրային հաղորդակցության արդյունքում կազմավորվում է առանձին հաղորդակցական մոդել, որն իր կառուցվածքով կարող է լինել ինչպես գծային, այնպես էլ երկխոսական և գործարքային:
- Որմնագրային հաղորդակցության մոդելում առաջանում է նոր բաղադրիչ՝ *ազդեցությունը*, որն անմիջականորեն կապված է մյուս բաղադրիչների՝ հաղորդագրության, խոսակցի և այն սոցիալական և լեզվական համատեքստերի հետ, որոնցում ծավալվում է որմնագրային հաղորդակցությունը:
- Ազդեցությունը՝ որպես հաղորդակցական մոդելի բաղադրիչ տարր, այն խթանն է, որի շնորհիվ հաղորդակցական մոդելը գծայինից կարող է վերաճվել երկխոսականի և գործարքայինի:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը ապահովվում է տեսական և փաստական նյութի համակողմանի քննությամբ, անհրաժեշտ մեթոդների արդյունավետ և ատենախոսության նպատակին համապատասխան կիրառմամբ, ինչպես նաև տրամաբանական շարադրանքով:

**Հետազոտության նյութի փորձաքննությունը.** ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են 14-րդ LATEUM միջազգային գիտաժողովում (Մոսկվա, 22-24 սեպտեմբերի, 2021), քննարկվել փոխանակման ծրագրերի ընթացքում (Լեհաստան 2019, Իտալիա 2020), ԵՊՀ անգլերենի թիվ 2 և անգլիական բանասիրության ամբիոնների նիստերում (2020, 2021):

Ատենախոսության **կառուցվածքն ու բովանդակությունը** պայմանավորված են հետազոտության թեմայով, քննվող նյութի պահանջներով, առաջադրված նպատակներով և խնդիրներով: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև բառարանների, փաստական նյութի և համացանցային աղբյուրների ցանկից:

**Ներածության** մեջ հիմնավորվում են ատենախոսության թեմայի ընտրու-

թյունը, արդիականությունն ու գիտական նորույթը, նպատակն ու խնդիրները, նշվում են ուսումնասիրության առարկան և օբյեկտը, հետազոտության փաստական նյութը, ինչպես նաև ներկայացվում է աշխատանքի տեսական և գործնական արժեքը:

Ատենախոսության **առաջին գլուխը («Որմնագրություն. տարբեր տեսական մոտեցումներ»)** բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում («Որմնագրությունը որպես համալիր լեզվական երևույթ»)** վեր են հանվում *որմնագրություն* եզրույթի սահմանումների հիմնական առանձնահատկությունները, ընդգծվում առկա տարբերությունները: Որոշարկվում են հասարակության կյանքում որմնագրության՝ որպես հասարակական գործունեության իրականացրած գործառույթները: Մանրակրկիտ քննության են առնվում տեսական գրականության մեջ որմնագրության լեզվական հայեցակերպին առնչվող առանցքային մոտեցումները, վեր են հանվում որմնագրությունը որպես առանձին խոսույթ ձևակերպող հիմնադրույթները:

**Երկրորդ ենթագլխում («Որմնագրությունը որպես բազմաեղանակային հաղորդակցության միջոց»)** դիտարկվում են որմնագրությունը բազմաեղանակային քննության ենթարկած հետազոտողների ուսումնասիրությունները, վեր է հանվում որմնագրությունը ձևավորող հաղորդակցության եղանակների դերը իմաստաստեղծման գործընթացում: Ներկայացվում են որմնագրային նմուշների ստեղծման քայլերի հաջորդականությունը, իմաստային միավորների՝ միմյանց հետ ունեցած կապերը:

**Երրորդ ենթագլխում («Որմնագրությունը որպես խոսույթ»)** ներկայացվում են խոսույթի քննադատական վերլուծության տեսությամբ զբաղվող նշանավոր հեղինակների՝ վան Դեյքի, Ն. Ֆեյրքլաֆի, Ռ. Վոդակի և Մ. Ռեյզիգի մոտեցումները, փորձ է արվում տեղակայել որմնագրային խոսույթը այս մոտեցումների համատեքստում՝ բացահայտելով որմնագրության՝ որպես խոսույթի առանձնահատկությունները, ինչպես նաև դասակարգման ենթարկելով նրանում օգտագործվող լեզվական և արտալեզվական միավորները:

Ատենախոսության **երկրորդ գլուխը («Որմնագրային խոսույթի իմաստաստեղծման բնորոշ գծերը»)** բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլուխը («Լեզվի գործառական հայեցակերպը անգլալեզու որմնագրային տեքստերում»)** նվիրված է որմնագրային տեքստերում կիրառվող լեզվի գործառույթների քննությանը՝ համաձայն Յակոբսոնի առաջադրած տեսության: Վեր են հանվում որմնագրային տեքստի լեզվի գործառույթների հիմնական օրինաչափությունները, զանազան լեզվական միջոցների կիրառական առանձնահատկությունները, ինչպես նաև հաղորդակցության տարբեր եղանակների դերը լեզվի գործառույթների իրականացման գործում: Մանրամասն քննության են ենթարկվում այն լեզվական միջոցները, որոնց շնորհիվ իրականացվում են լեզվի հետևյալ գործառույթները՝ հուզական

(emotive), վերաբերյալը մատնանշելու (referential), դիմելու (conative), բանաստեղծական (poetic), խոսքարկման (phatic) և մետալեզվական (metalingual):

Որմնագրության դիտարկումը լեզվի գործառույթների համատեքստում ապահովում է ուսումնասիրվող նյութի քննության համակողմանի մոտեցում. այն ցույց է տալիս, որ որմնագրային խոսույթը կազմված է զանազան լեզվական միջոցներից, որոնք փոխանցում են հաղորդագրությունը և իրացնում լեզվի նշված գործառույթները: Լեզվի գործառույթների իրացումը որմնագրային խոսույթում կատարվում է ինչպես բացառապես լեզվական միջոցներով, այնպես էլ հաղորդակցության տարբեր եղանակների՝ միմյանց հետ ունեցած ներքին փոխկապակցվածության շնորհիվ:

**Երկրորդ ենթազույգը («Որմնագրությունը որպես ճարտասանական խոսք»)** քննության է առնում որմնագրային այն նմուշները, որոնցում առկա լեզվական միջոցները նպաստում են Արիստոտելի առաջադրած համոզման երեք հիմնական ռազմավարությունների՝ պաթոսի, էթոսի և լոգոսի ձևավորմանը այս խոսույթում: Վեր են հանվում մի շարք լեզվական միջոցներ (ինչպես օրինակ՝ պայմանականությունը, հակադրությունները, միջտեքստայնությունը, փոխաբերությունները և այլն), որոնք ունեն իմաստակառուցվածքային զանազան առանձնահատկություններ, ինչպես նաև առանցքային դերակատարություն որմնագրային տեքստի իմաստաստեղծման գործընթացում:

Պայմանական նախադասությունները որմնագրային հաղորդակցությունն ավելի դինամիկ են դարձնում: Պայմանական նախադասությունների միջոցով հեղինակն ակնկալում է իր ընթերցողի համաձայնությունը արտահայտած գաղափարին և տրամաբանորեն, աստիճանաբար զարգացող մտքերով գալիս որոշակի հանրագումարի վերջինիս հետ՝ այսպիսով տեղավորելով ընթերցողին ենթադրյալ համատեքստում՝ համոզման հասնելու համար:

Դիտարկենք հետևյալ օրինակները՝

*“If someone wants to leave, let them”.<sup>1</sup>*

*“If I had the right word I would have nothing to say”.<sup>2</sup>*

*“If only they asked who we were instead of what we wanted to be”.<sup>3</sup>*

*“If you were waiting for a sign this is it”.<sup>4</sup>*

*“If you win a rat-race, you’re still a rat”.<sup>5</sup>*

Տվյալ օրինակներում հեղինակը փորձում է «համագործակցել» իր պոտենցիալ ընթերցողի հետ՝ վերջինիս դնելով ենթադրյալ իրավիճակում: Անկախ նրանից, թե նախադասությունը ինչ նպատակ կամ բովանդակություն ունի,

<sup>1</sup>/<https://www.pinterest.com/pin/816347869974621191/> (մուտք 06.02.2020)

<sup>2</sup>/<https://www.facebook.com/co.vandalism/photos/2206100139478833/> (մուտք 17.09.2019)

<sup>3</sup>/<https://www.pinterest.com.au/pin/291537775852583955/?d=t&mt=logi/> (մուտք 26.03.2020)

<sup>4</sup>/<https://www.pinterest.com.mx/pin/100275529183280874/> (մուտք 09.04.2019)

<sup>5</sup>/<https://www.vhils.com/exhibitions/even-if-you-win-the-rat-race-youre-still/> (մուտք 13.07.2020)



պայմանականությունը հասցեագրողի և հասցեատիրոջ միջև կապն ավելի ամուր և մտերմիկ է դարձնում: Նման կապը նախ որոշվում է տեքստի ամբողջականության կատեգորիայով (արտահայտված *I, you, we* դերանուններով), երկրորդ՝ պայմանական նախադասությամբ ստեղծված իրավիճակով, որն ընթերցողին դարձնում է գործողությունների անմիջական և ականա մասնակիցը:

Որմնագրային այն նմուշները, որոնցում հաղորդագրությունը փոխանցվում է պայմանական նախադասությունների միջոցով, հիմնականում միտված են խորհուրդ տալու ընթերցողին, դրդելու վերջինիս տրամաբանել, մղելու նրան հարցականի տակ դնել զանազան գաղափարներ՝ դրանք կուրորեն ընդունելու փոխարեն, մեկնաբանելու տարբեր հայտարարությունների իմաստը, ինչպես նաև մղելու հասցեատիրոջը գործել, գործել այնպես, ինչպես հուշում է ուղերձի հեղինակը:

Որմնագրային տեքստի իմաստի կառուցման գործընթացում մեծ դեր են խաղում հակադրությունները: Որմնագրային խոսույթում հակադրությունների եզրերը կարող են արտացոլված լինել տարբեր միջոցներով, ինչպես օրինակ, գոյականներով (*You have God, I have Allah*<sup>6</sup>), ածականներով կամ բայերով (*If we wash our hands of the conflict between the powerful and the powerless, we side with the powerful, we don't remain neutral*): Այս կապակցություններից յուրաքանչյուրի կիրառումը հետապնդում է որոշակի նպատակ: Հիմնականում այն միտված է արտահայտելու դժգոհություն կամ բողոք մի երևույթի կամ իրողության վերաբերյալ և բևեռելու ընթերցողի ուշադրությունը հակադրության երկրորդ կողմի վրա:

Որմնագրային խոսույթում իմաստաստեղծման գործընթացի կարևորագույն ռազմավարություններից է միջտեքստայնությունը: Միջտեքստայնությունն այն մեխանիզմն է, որի միջոցով երկխոսություն և դինամիկա է հաղորդվում խոսքին<sup>7</sup>: Որմնագրային խոսույթում պատումները բազմազան են՝ սկսած Աստվածաշնչից մինչև ժամանակակից երգեր, պոեզիա կամ նույնիսկ ֆիլմեր և մուլտֆիլմեր: Այստեղ միջտեքստային պատումները մեծ մասամբ նպատակաուղղված են զուգահեռներ անցկացնելու գրական պատմվածքների և այն հասարակական-քաղաքական համատեքստի միջև, որին պատկանում է որմնագրային նմուշը: Միջտեքստային պատումները որմնագրային խոսույթում ուղերձն անուղղակիորեն են փոխանցում, մտքի արտահայտման առումով կարճ են և կոնկրետ, իսկ բովանդակային առումով՝ շատ ավելի ընդգրկուն ու դինամիկ: Միջտեքստայնության միջոցով այն, ինչ խոսողը մտադիր է արտահայտել, հեշտությամբ վերծանելի է դառնում:

---

<sup>6</sup>Փակագծերում բերված օրինակները վերցված են հետևյալ էլեկտրոնային աղբյուրներից՝ <https://www.flickr.com/>, [www.pinterest.com/](http://www.pinterest.com/), <https://www.facebook.com/co.vandalism>

<sup>7</sup>Snyman G. Who is speaking? Intertextuality and textual influence // *Neotestamentica*, Vol. 30, No. 2, 1996.

Դիտարկենք մեկ օրինակ (նկար 1<sup>8</sup>), որը միջտեքստայնորեն կապված է հայտնի պատումի հետ:

Որմնագրային այս նմուշի (*Pig brother is watching you*) ստեղծողն անդրադառնում է Ջորջ Օրուելի երկու հայտնի վեպերին՝ «Անասնաֆերմա»-ին և «1984»-ին: Հեղինակը փորձում է Օրուելին ու նրա գրվածքներն օգտագործել որպես միջոց՝ իր խոսքն վստահելի, հետևաբար՝ ավելի համոզիչ դարձնելու համար: Հաղորդագրությունը այս նմուշում փոխանցվում է երկու



Նկար 1

պատումների միասնության միջոցով. մի կողմից այն պարունակում է որոշ իշխանությունների կողմից վերահսկվելու (*watching you*) պատումը, մյուս կողմից՝ նույն հեղինակությունները համեմատվում են կենդանու՝ խոզի հետ: Այս բավականին կոշտ համեմատությունն առավել պատկերավոր է դառնում հասցեատիրոջը նայող և մարդու՝ «մեծ եղբոր» պես հագնված ու դիրքավորված կենդանու ուղեկցող կերպարով: Նշենք, որ *pig* և *big* բառերն այստեղ օգտագործված են որպես բառախաղ:

Արիստոտելի առաջադրած համոզման գործառույթներից էթոսը, ի թիվս այլ միջոցների, որմնագրային խոսույթում կարող է նաև հանդես գալ պատկեր-տեքստ համադրությունների միջոցով (նկար 2<sup>9</sup>):

Տեքստին ուղեկցող պատկերը ընթերցողին մատնացույց է անում մեջբերման հեղինակին՝ այդկերպ ձգտելով լինել ավելի համոզիչ և վստահելի: Որմնագրային այս նմուշի տեքստը պարունակում է մի պարզ հաղորդագրություն սիրո մասին, որը կարող է պատկերվել տարբեր սոցիալական իրավիճակներում: Նկարը, ինչպես տեսնում ենք, չափերով շատ ավելի մեծ է և



Նկար 2

<sup>8</sup><https://imgur.com/gallery/iSQEadM/> (մուտք 27.03.2020)

<sup>9</sup><https://www.pinterest.com/pin/121315783702101383/> (մուտք 13.02.2020)

գրավիչ, հետևաբար, երբ հեղինակը ցանկանում է ապացուցել իր արժանահավատությունը՝ հղում կատարելով որևէ հեղինակության, նա կարող է դա անել՝ համադրելով իր խոսքը «հեղինակի» նկարի հետ:

Որմնագրային խոսույթում պաթոսի ռազմավարությունն իրականացվում է մի շարք լեզվաճանաչական հնարների միջոցով, որոնցից ամենաակնառուն փոխաբերությունն է: Փոխաբերությունները կիրառվում են որմնագրային խոսույթում՝ հիմնականում նպատակ ունենալով գեղագիտական և զգացմունքային ազդեցություն թողնելու հասցեատերերի վրա, ինչպես նաև շատ ավելի մոտ լինելու առօրյա խոսակցական լեզվին: Տեսողական փոխաբերությունների դեպքում ստեղծվում են ավելի պատկերավոր և ավելի ընդգրկուն հաղորդագրություններ:

Որմնագրային խոսույթում փոխաբերությունները վերլուծելու համար մենք առաջնորդվում ենք Գ. Ստեմկյուվիդիսի և Մ. Բլոյնեզիի կողմից առաջադրված փուլային ընթացակարգով<sup>10</sup>:

Տեքստային մակարդակում պաթոսը հաստատվում է փոխաբերությունների դիպուկ գործածմամբ՝ խոսքն ավելի հետաքրքիր և գրավիչ դարձնելու համար՝ առաջացնելով տարբեր (դրական կամ բացասական) զգացմունքներ հասցեատերերի մոտ, ինչպես նաև որոշակի ուղեբձներ ակնարկելու համար՝ խոսափելով միտքը ուղղակիորեն արտահայտելուց և խթանելով նոր մտքեր ու հետագա գործողություններ լսարանի մոտ: Հարկ է նշել նաև, որ փոխաբերությունները որմնագրային խոսույթում էական դեր են խաղում հակադրություններ ստեղծելու գործում:

Որմնագրային այս նմուշը (նկար 3<sup>11</sup>) ներկայացնում է տեսողական և բառային փոխաբերությունների համադրություն: Փոխաբերականությունը հիմնված է *mouse* բառի՝ և՛ որպես կրծողի, և՛ որպես գործիքի համեմատության վրա: Որմնագրային այս նմուշը բարձրաձայնում է սոցիալական խնդիր: Ընդհանուր առմամբ՝ այն առակ է հիշեցնում, որի «ուսուցողական» մասը ամբողջ որմնագրության բովանդակությամբ փոխանցվող ենթատեքստն է:



Նկար 3

<sup>10</sup>Stampoulidis G., Bolognesi M. Bringing metaphors back to the streets: a corpus-based study for the identification and interpretation of rhetorical figures in street art // *Visual communication*, Vol. 0 (0), 2019.

<sup>11</sup><https://ezekiel-blr.tumblr.com/post/152987714335/wake-up-reality-is-here/> (մուտք 12.10.2020)

Որմնագրային այս նմուշը կարող է պատկերվել սոցիալական տարբեր իրավիճակներում, սակայն, ամենայն հավանականությամբ, այն կոչ է անում ժողովրդին «արթնանալ» առցանց-գուգահեռ իրականությունից և «սկսել ապրել իրական աշխարհում»: Վերջինս ամբողջ նմուշի հաղորդակցական նպատակն է:

Դիտարկելով որմնագրությունը որպես ճարտասանական խոսք՝ կարող ենք նշել, որ որմնագրային խոսույթում համոզման ռազմավարությունների կիրառումը դրսևորվում է բազմաթիվ միջոցներով: Որմնագրության հեղինակներն իրենց մտքերը փոխանցում են նախ և առաջ տարբեր լեզվական (բառապաշար, քերականություն, ոճ, տեքստային կատեգորիաներ, միջտեքստայնություն և այլն), ինչպես նաև ոչ լեզվական (պատկեր, տեքստի գույն, ձև, չափ, ֆիզիկական միջավայր) միջոցների պատշաճ գործածմամբ՝ նպատակ ունենալով համոզել լսարանին:

**Երրորդ ենթազվյում («Որմնագրությունը խոսույթի քննադատական վերլուծության լույսի ներքո»)** որմնագրային տեքստերի (և/կամ պատկեր-տեքստ հարաբերակցությունների) նմուշները դասակարգված են խոսույթի չորս հիմնական խմբերում՝ փաստարկում, պատում, նկարագրություն և ցուցադրություն: Այսպես որմնագրային խոսույթի համոզման գործառույթները իրականացնող լեզվական և արտալեզվական միավորները համակարգվում են ըստ իրենց գործառույթային կարևորության:

Որմնագրային ամենատարբեր նմուշների ուսումնասիրությունը ըստ խոսույթի քննադատական վերլուծության մեթոդի թույլ է տալիս առանձնացնել մի շարք լեզվական և արտալեզվական միջոցներ ու հնարներ, որոնք, ի լրումն հետազոտության ընթացքում վերհանված մյուս միջոցների և հնարների, իրենց որոշիչ դերն ունեն իմաստաստեղծման գործում: Այս միջոցներն են՝ բառախաղերը, շարադասությունը, տեքստի հաղորդակցական իմաստը (խնդրանք, հարց, խորհուրդ և այլն), հայտնի տեքստերի ձևափոխումը, մեջբերումները, ասացվածքները և տեքստ-պատկեր հարաբերակցությունները: Բացի այդ, որմնագրային խոսույթի քննադատական վերլուծությունը ամբողջացնում է որմնագրության հաղորդակցական ներուժի մասին մեր պատկերացումները՝ ապացուցելով, որ որմնագրային տարբեր նմուշներ կարող են ունենալ տարբեր հաղորդակցական իմաստներ, մինչդեռ դրանք միշտ չէ, որ համընկնում են հեղինակների հաղորդակցական նպատակների հետ, ինչը հաղորդագրությունը անուղղակիորեն է փոխանցում՝ խոսակիցների վրա համապատասխան ազդեցությամբ:

Որմնագրային խոսույթի մեր վերլուծությունը թույլ է տալիս առաջադրել համակցված մի մեխանիզմ, համաձայն որի կարելի է տեքստային վերլուծության ենթարկել որմնագրային նմուշները: Առաջադրվող մեխանիզմը բնութագրում է որմնագրությունը որպես սոցիալական և լեզվական գործունեություն:

Հետևաբար, առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե ինչպիսի սոցիալական համատեքստում է ծավալվում որմնագրային նմուշը: Դա պահանջում է որոշակի նախնական գիտելիքներ այն հասարակական-քաղաքական խնդիրների վերաբերյալ, որոնք կարող են ընկած լինել որմնագրային նմուշի ստեղծման հիմքում և կարող են արտացոլված լինել բովանդակության մեջ: Անհրաժեշտ է դիտարկել որմնագրային նմուշը բազմաեղանակայնության տեսանկյունից նույնպես՝ վերլուծելով, թե ինչպես են հաղորդակցության եղանակները՝ պատկերը, գույնը, չափը, ձևը և այլն մասնակցում իմաստաստեղծման գործընթացին, անկախ նրանից՝ այս եղանակները առաջնային, թե երկրորդական պլան են մղում տեքստի դերը որմնագրային նմուշում: Լեզվական համատեքստում վերլուծությունը պետք է կատարվի մի քանի մակարդակներում: Ամենավճռորոշ մակարդակը, որը բնութագրում է որմնագրային նմուշի ստեղծումը որպես հաղորդակցական ակտ, հաղորդակցական մակարդակն է: Այս փուլում հայտնաբերվում է որմնագրային նմուշի հաղորդակցական իմաստը, իրական հաղորդակցական նպատակը (եթե տարբերվում է իմաստից) և չափվում ուժգնության այն մակարդակը, որը կունենա հաղորդագրության ազդեցությունը՝ հիմնվելով նախորդ մակարդակների վերլուծության վրա:

Ատենախոսության **երրորդ գլուխը** («**Որմնագրային հաղորդակցության մոդելի ձևավորումը**») բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում** («**Հաղորդակցություն. հաղորդակցական մոդելների տեսակները**») վեր են հանվում որմնագրային հաղորդակցության առանձնահատկությունները մասնավոր և հանրային տիրույթներում: Ներկայացվում են հաղորդակցության տեսական ուսումնասիրություններում տարբեր մոտեցումներ հաղորդակցական մոդելների և դրանց տեսակների վերաբերյալ: Բնութագրվում են որմնագրային հաղորդակցության մոդելի կառուցվածքը և հիմնական տեսակները (գծային, երկխոսական, գործարքային):

**Երկրորդ ենթագլխում** («**Որմնագրային հաղորդակցության մոդելի բաղադրիչները**») ներկայացվում են որմնագրային հաղորդակցության մոդելը ձևավորող յուրաքանչյուր բաղադրիչի բովանդակային և գործառական առանձնահատկությունները, հիմնավորվում է *ազդեցության*՝ որպես սույն մոդելի նոր և առանցքային բաղադրիչի ներմուծման անհրաժեշտությունն ու նշանակությունը:

Որմնագրային հաղորդակցության հիմնական տարրերն են խոսողը (հասցեագրողը), ալիքը, հաղորդագրությունը, ընդունողը (կամ հասցեատերը) և աղմուկի աղբյուրը: Որմնագրային խոսույթում **խոսողը** սովորաբար անհատ է կամ անհատների խումբ, որը բարձրաձայնում է անձնական կամ հանրային խնդիրներ: Որմնագրային խոսույթում հաղորդակցության փոխանցման **ալիքի** դերը ստանձնում են պատերը կամ հանրային այն մակերեսները, որտեղ հնարավոր է գրել և նկարել: **Հաղորդագրությունը** որմնագրային հաղորդակցու-

թյան մոդելի ամենակարևոր տարրերից է: Լինելով համոզման գործառույթն իրականացնող խոսույթ՝ որմնագրության միջոցով փոխանցվող հաղորդագրությունները ոչ միայն պետք է բոլորին տեսանելի, այլև իմաստային և գործաբանական առումով բավականին «ուժեղ» լինեն, որ հնարավորություն ունենան ընկալվելու հասարակության լայն զանգվածների կողմից՝ որոշակի հուզական և գաղափարական ազդեցություն թողնելով նրանց վրա: Որմնագրային հաղորդակցության մոդելի հաջորդ տարրը, որը կարող է հաճախ հայտնվել այս խոսույթում, **աղմուկն** է: Հաղորդակցական աղմուկը, լինելով հաղորդագրության ճշգրիտ ըմբռնմանը խոչընդոտող գործոն, պայմանավորված է որմնագրային տեքստերի և պատկերների կառուցվածքային և բովանդակային եզակի առանձնահատկություններով: Կարևոր է շեշտել, որ որմնագրային հաղորդակցության մոդելի որոշիչ տարրերից մեկը հաղորդագրությունն **ընդունողն** է, որից կախված՝ հաղորդակցության մոդելը կարող է փոխվել գծայինից երկխոսականի և գործարքայինի կամ մնալ գծային և առաջ բերել հաղորդակցության նոր տարրեր: Հաղորդակցության այս մոդելի ընդունողները կարող են լինել և՛ թիրախավորված, և՛ ոչ թիրախավորված. անկախ որմնագրությունը ստեղծողի նպատակից՝ սովորական մարդիկ, տարածքի բնակիչները, քաղաքացիները դառնում են հաղորդագրությունը ակամա ընդունողներ և հաղորդակցում այն տվյալ սոցիալական համատեքստում:


Վերջին՝ **երրորդ ենթագլխի («Որմնագրային հաղորդակցության մոդելի կառուցվածքը»)** սկզբում ներկայացվում են երեք առանցքային գործընթացների՝ որմնագրության ստեղծման, սպառման և լսարանի վրա ունեցած ազդեցության գլխավոր առանձնահատկությունները: Կառուցվում է որմնագրային հաղորդակցության մոդելը՝ գծային, երկխոսական և գործարքային տարատեսակներով, որոշարկվում են սույն մոդելի կառուցվածքային փոփոխությունները պայմանավորող գործոնները: Գործնական օրինակների միջոցով վեր են հանվում որմնագրային խոսույթի՝ որպես հաղորդակցության միջոցի և մոդելի առանցքային գծերը:

Որմնագրության ստեղծումը, սպառումը և ազդեցությունը միմյանց հետ փոխկապակցված և փոխլրացնող գործընթացներ են: Սկիզբը որմնագրային որևէ նմուշի ստեղծումն է՝ ըստ հիմքում ընկած հնարավոր դրդապատճառների և հաղորդակցական նպատակների: Որմնագրային հաղորդագրության սպառման գործընթացն իր մեջ ներառում է հաղորդագրության ընթերցում, մեկնաբանում և ասոցացում որմնագրության ստեղծման դրդապատճառների հետ:

Հաղորդագրությունների սպառման այս գործընթացը բնորոշ է որմնագրության բոլոր տեսակներին՝ անկախ ստեղծման դրդապատճառներից և նպատակներից: Որմնագրային հաղորդագրությունների սպառմանը բնորոշ հատկանիշները, ինչպես նաև հաղորդակցության մոդելի բաղադրիչների ա-

ոանձնահատկությունները կանխորոշում են մոդելի կառուցվածքը և տեսակը, որը ձևավորվում է որմնագրային հաղորդակցության միջոցով:

Որմնագրային հաղորդակցության *զծային* մոդելն ունի հետևյալ կառուցվածքը՝ խոսակցի կամքից կախված ընդլայնման հնարավորությամբ (զծապատկեր 1):



Գծապատկեր 1. Որմնագրային հաղորդակցության զծային մոդելը

Գծապատկերը հստակ ցույց է տալիս որմնագրային հաղորդակցության մոդելը ձևավորող տարրերի հաջորդականությունը և հաղորդակցական աղմուկի հնարավոր «վտանգավոր» աղբյուրները: Հաղորդագրությունը, սոցիալական և լեզվական համատեքստերը, որոնցում այն ծավալվում է, զծային մոդելի հիմնական տարրերն են: Եթե հեղինակը ցանկանում է, որ իր ուղերձը համարժեք վերձանվի և լսարանի վրա ունենա ցանկալի ազդեցություն, անհրաժեշտ է հաշվի առնել, թե որքանով են այս երեք տարրերը (հաղորդագրություն, սոցիալական համատեքստ և լեզվական համատեքստ) բովանդակային առումով համահունչ միմյանց հետ, և թե արդյոք նրանց միջև առկա փոխկապակցվածությունն ընդգծված է:

Ինչպես արդեն նշվել է, որմնագրային հաղորդագրությունները կոչված են ոչ միայն հանրությանը տեղեկացնելու որոշակի խնդիրների մասին, այլև համոզելու նրան իրենց մոտեցումներում, այս իսկ պատճառով կարևոր ենք համարում ուղերձի՝ հաղորդագրությունը ընդունողների վրա ունեցած **ազդեցության** նշանակությունը: Ինչպես հայտնի է, որմնագրությունը հզոր ազդեցություն ունի կյանքի տարբեր ոլորտների վրա (արվեստ, մշակույթ, հոգեբանություն, կրթություն, սոցիալական, քաղաքական կյանք և այլն): Հետազոտողների պնդմամբ՝ որմնագրությունը կարող է միավորել տարբեր մշակույթների



մարդկանց և կրթել աշխարհը<sup>12</sup>: Այն կարող է ազդել հասարակության վրա սոցիալապես, հոգեբանորեն և մշակութային առումով: Ընդհանուր առմամբ, որմնագրությունը ծառայում է որպես գոյությունը փաստող «հայտարարություն», այն անհատի, ծայնի, գաղափարի գոյությունը, որը ճնշված է, հասարակությունից օտարացած կամ անտեսված:

Անհրաժեշտ ենք համարում ընդլայնել քննարկվող հաղորդակցական մոդելը և ներառել նրանում *ազդեցությունը* որպես առանձին տարր: Ազդեցության գաղափարի՝ հաղորդակցության մոդելում ընդգրկմամբ էլ ավելի է շեշտվում խոսողի մտադրության կարևորությունը և նրա ներգործությունը լսարանի վրա, քանի որ որմնագրային խոսույթում այս մտադրությունն ու ներգործությունն են որոշում հաղորդագրության տեքստային և պատկերային կառուցվածքը: Գծապատկեր 1-ը ցույց է տալիս *ազդեցության* կախվածությունը որմնագրային հաղորդակցության մոդելի մնացած տարրերից: Առաջին հերթին այն սերտ փոխկապակցված է հաղորդագրությունը ընդունողի հետ, քանի որ ընդունողն այն «միավորն» է, որը վերծանում է հաղորդագրությունը և ենթարկվում ազդեցությանը: Վերջապես, որմնագրությամբ արտահայտված հաղորդագրության ազդեցության «գոյությունը» անշեղորեն հիմնված է աղմուկի աղբյուրի վրա. հաղորդագրություն – սոցիալական համատեքստ կամ հաղորդագրություն – լեզվական համատեքստ հարաբերությունների պատճառով առաջացած աղմուկը կարող է հանգեցնել թյուրըմբռնման, որն իր հերթին նվազեցնում է հաղորդագրության ազդեցությունը լսարանի վրա:

Ազդեցության կարևորագույն բնութագրական հատկանիշներից մեկը ուժգնությունն է: Որմնագրային հաղորդակցության ազդեցության ուժգնությունը որոշվում է կիրառված լեզվի, որմնագրային նմուշը շրջապատող սոցիալական համատեքստի, հեղինակի հաղորդակցական նպատակի և հաղորդագրության ուղղակի/անուղղակի փոխանցման գործոններով:

Դիտարկենք մեկ օրինակ՝ բացահայտելու համար, թե ինչպես է գործարկվում որմնագրային հաղորդակցության *գծային* մոդելը (նկար 4<sup>13</sup>):



**Նկար 4**

<sup>12</sup>տե՛ս օրինակ Daniela De Castro [https://www.ted.com/talks/daniela\\_de\\_castro\\_sucere\\_the\\_power\\_of\\_street\\_art](https://www.ted.com/talks/daniela_de_castro_sucere_the_power_of_street_art)  
<sup>13</sup><https://theglocalexperience.com/2020/08/10/how-is-the-covid-19-crisis-affecting-colombia/> (մուտք 23.10.2020)




Որմնագրային այս նմուշը վերջերս է հայտնվել Կոլումբիայում: Տեքստը կառուցված է COVID-19 վիրուսի անվանման և Ջորջ Օրուելի հայտնի «1984»<sup>14</sup> վեպի զուգադրմամբ: Որմնագրային այս նմուշի ուղերձը նախ նպատակ ունի հանրությանը տեղեկացնել ընթացիկ սոցիալական իրավիճակի մասին (սոցիալական համատեքստ), երկրորդը՝ այս տեղեկատվության միջոցով համոզել նրան արտահայտած գաղափարում: Վերոնշյալ նպատակն իրագործվում է տեքստային կապի շնորհիվ (1984թ.՝ տեքստային համատեքստ): Որմնագրության սոցիալական համատեքստը COVID-19 վիրուսի բռնկման այն շրջանն է, երբ ուժգնացել էր դրական ախտորոշում ունեցող հիվանդների նկատմամբ հսկողությունը և ոստիկանությունը իրավասու էր գտնել հնարավոր կոնտակտավորներին՝ հայտնաբերելով նրանց գտնվելու վայրը՝ մեկուսացնելու, կարանտինի ենթարկելու և բուժելու նպատակով: Սոցիալական այս իրավիճակը միջտեքստայնորեն կապված է «1984» գրքին, որտեղ ոստիկանությունը զուգահեռվում է «Մեծ եղբոր» հետ, ով անընդհատ «հետևում է քեզ»: Այս հաղորդագրությունն ուղարկողն ակնհայտորեն նպատակ ունի իր լսարանին մղելու մտածել ընթացիկ սոցիալական իրավիճակի շուրջ՝ դրա գաղտնի, առաջին հայացքից քողարկված շերտերի մասին: Լսարանը կարող է լիարժեքորեն ըմբռնել հաղորդագրության իմաստը, եթե ծանոթ լինի «1984» վեպին և կարողանա վերհիշել այն հատվածը, որին հղում է անում որմնագրությունը, ինչպես նաև կարողանա հասկանալ ընթացիկ սոցիալական իրավիճակի մակերեսային և առավել խորքային մանրամասները: Ի վերջո, տվյալ հաղորդագրությունն ընդունողն իր մտքում պետք է կարողանա միավորել այն երկու համատեքստերը (սոցիալական և տեքստային), որոնցում ստեղծվում է հաղորդագրությունը: Այսօրինակ գիտելիքների բացակայությունը հանգեցնում է հաղորդակցական աղմուկի, ինչն էլ իր հերթին կարող է առաջ բերել հաղորդագրության տարընթերցումներ և սխալ մեկնաբանություններ: Այս ուղերձի՝ լսարանի վրա հնարավոր ներգործությունը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել *ազդեցության* գործոնը, որը տվյալ դեպքում կախված է սոցիալական համատեքստից (COVID-19), տեքստային համատեքստից (Օրուելի վեպը): Որմնագրային այս նմուշի սոցիալական ենթատեքստը համաժամանակյա է, այսինքն՝ այն ստեղծվել է կորոնավիրուսային համաճարակի ժամանակ, միևնույն ժամանակ նշենք, որ սոցիալական ենթատեքստը, որին այն վերաբերում է, կարող է նաև տարաժամանակյա լինել:

Որմնագրային հաղորդագրության մոդելի *գծային* կառուցվածքը պայմանավորված է երկու հիմնական գործոնով. ա) խոսողը հնչեցնում է մի միտք, որն ուղղակիորեն փոխանցվում է հասցեատիրոջը, բ) հասցեատիրոջ կողմից անմիջական արձագանքը պարտադիր չէ: Այնուամենայնիվ, որմնագրային տեքստերն ու պատկերները, որոնք «սպառվում են» մարդկանց մեծ զանգված-

<sup>14</sup> Orwell G. 1984. New York: The New American Library, 1961.

ների կողմից, ներուժ ունեն շարունակելու հաղորդակցությունը հենց իրենք իրենց՝ հասցեատերերի (մենախոսություններ), ինչպես նաև հասարակության մյուս անդամների հետ: Այստեղ կենտրոնական դերը պատկանում է հաղորդագրությունը ընդունողներին և հաղորդագրության՝ նրանց վրա թողած ազդեցությանը: Տվյալ պարագայում որմնագրային հաղորդակցության մոդելը կարող է զարգանալ երկու ուղով (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Որմնագրային հաղորդակցության մոդելի զարգացումը երկխոսականի և գործարքայինի

Գծապատկերը ցույց է տալիս հաղորդակցության *գծային* մոդելի ներուժը վերածվելու *երկխոսականի* և մասամբ նաև *գործարքայինի*:


Մոդելի զարգացումը գծայինից երկխոսականի մեծապես կախված է հաղորդագրությունը ընդունողից, սկզբնական հաղորդագրության ազդեցությունից և նրանից, թե հաղորդագրությունը ենթարկվել է արդյոք հաղորդակցական աղմուկի: Եթե ընդունողը որոշում է արձագանքել և փոխանցել նոր հաղորդագրություն (հետադարձ կապ), ապա այն անշեղորեն հիմնված է լինում

նախորդ հաղորդագրության մեկնաբանման վրա: Հետադարձ կապը կարող է փոխանցվել նույն աիքով (օր.՝ պատի վրա, որտեղ հայտնվել է որմնագրությունը) և նույն սոցիալական միջավայրում: Տեքստային/լեզվական համատեքստը կարող է փոխվել խոսողի (նախկին ընդունողի) կողմից՝ կախված նրանից, թե ինչպես է նա կառուցում իր խոսքը: Այս դեպքում աղմուկը բխում է հաղորդագրությունից, մասնավորապես՝ դրա տեքստային և լեզվական կառուցվածքից: Որմնագրային հաղորդակցության *երկխոսական* մոդելի առանձնահատկություններից մեկն այն է, որ հաղորդագրությունն ընդունողի կողմից տրված հետադարձ կապը, բացի այն անձից, ում այն ուղղված է, «սպառվում է» նաև հասարակության այլ անդամների կողմից:

Որմնագրային հաղորդակցության *գծային* մոդելը վերածվում է *երկխոսականի*, երբ ընդունողը սկսում է մտածել որմնագրության միջոցով բարձրաձայնված խնդիրների մասին և խոսել ինքն իր հետ (մենախոսություն): Հակառակ պարագայում, առաջին հաղորդագրության հասցեստերը, իր վրա ունեցած ազդեցության շնորհիվ, կարող է կիսվել այդ գաղափարներով ոչ միայն ինքն իր, այլև հասարակության մյուս անդամների հետ: Կարևոր է նշել, որ այս հաջորդող հաղորդակցությունը կարող է կառուցվել տարբեր ձևերով, տարբեր խոսույթներում, և պարտադիր չէ, որ ներառի որմնագրային խոսույթը: Այնուամենայնիվ, հաղորդակցության գործընթացի այսօրինակ զարգացումը չի կարող անտեսվել, քանի որ դրա ելակետը որմնագրային խոսույթն է, որտեղ քննարկվող հարցերը բազմաթիվ են և չեն ճանաչում որևէ թեմատիկ սահմանափակում:

Որմնագրային հաղորդակցության *երկխոսական-գործարքային* մոդելը կարող է ձևավորվել տարբեր սոցիալական և ֆիզիկական միջավայրերում:

Որմնագրային տեքստի հետևյալ նմուշը (նկար 5<sup>15</sup>) հայտնվել է հանրային լրգարանում (սոցիալական համատեքստ): Թեև այն չի պարունակում որևէ միջտեքստային կապ, այն ունի հստակ



Նկար 5

<sup>15</sup> <https://imgflip.com/i/2jzy1x> (մուտք 24.02.2020).

լեզվական կառուցվածք (տեքստային համատեքստ): Առաջին հաղորդագրությունը հասցեատիրոջն ուղղված է անուղղակիորեն՝ տեքստի ամբողջականության կատեգորիայի միջոցով՝ հասցեատիրոջը գործողություններից չբացառելու, այլ իրադարձություններին ներգրավելու, նրա խոսքը համոզիչ դարձնելու և ավելի ազդեցիկ հաղորդագրություն թողնելու նպատակով: Հաղորդագրության գլխավոր նպատակն ընդգծելու համար հեղինակն օգտագործում է «իրադարձությունների» կրկնվող շարք ժխտական խոնարհմամբ արտահայտված բայերի միջոցով (*don't need, don't have, don't love*): Տեքստի տրամաբանական շղթան կառուցված է առաջին մասում *with* նախդիրով և անորոշ դերբայով (օր.՝ *to impress*): Պատասխանը կամ արձագանքը, որը հայտնվում է միևնույն սոցիալական միջավայրում, հետևում է նույն լեզվական օրինակին: Ինչպես տեսնում ենք, հետադարձ կապը համապատասխանում է հաղորդագրությանը ոչ միայն կառուցվածքային, այլև բովանդակային առումով: Հետադարձ կապի յուրաքանչյուր մաս ուղիղ պատասխան է առաջին հաղորդագրությանը, այն արտահայտում է սարկազմ ստեղծողի նկատմամբ և քննադատում նրան: Որմնագրային այս նմուշը, բացի այն, որ պատասխանի է արժանացել անանուն հասցեատիրոջ (ընդունողի) կողմից (հետադարձ կապ), նաև հաղորդակցություն է խթանել տարբեր խոսույթներում<sup>16</sup>: Վերջին միտքը (*We go to college...*) հիմնական հաղորդագրության (*We buy things...*) տրամաբանական շարունակությունն է, թեև նկարին ավելացվել է սոցիալական մեղիայում և դեռևս հաղորդակցվում է հասարակության լայն զանգվածների կողմից տարբեր սոցիալական համատեքստերում<sup>17</sup>:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ որմնագրային հաղորդակցության մոդելի յուրաքանչյուր տարր, կախված իրեն բնորոշ հատկանիշներից, որոշում է մոդելի կառուցվածքը՝ գծայինից երկխոսական և երկխոսականից գործարքային զարգացումներով: Հաղորդակցական բոլոր մոդելներում, որոնք ձևավորում է որմնագրությունը, հաղորդակցությանը խոչընդոտող աղմուկի պոտենցիալ աղբյուրը վերաբերում է հաղորդագրությանը, նրա լեզվական և տեքստային կառուցվածքին, ինչպես նաև այն տեքստային և սոցիալական համատեքստերին, որոնցում հայտնվում է որմնագրային նմուշը: Որմնագրային հաղորդակցության մոդելի տարրերը շարունակում են փոխկապակցված մնալ միմյանց հետ, նույնիսկ երբ մոդելը կառուցվածքային առումով փոփոխության է ենթարկվում:

<sup>16</sup>տե՛ս <https://imgflip.com/>

<sup>17</sup>տե՛ս <https://imgflip.com/i/2jzylx/>

## **Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝**

- Որմնագրությունը որպես հասարակական գործունեություն շարունակաբար ընդլայնում է իր իմաստա-բովանդակային դաշտը՝ լայն տարածում ստանալով օրեցօր ավելացող սոցիալ-քաղաքական իրադարձությունների, անձնական և հասարակական խնդիրների ֆոնին: Լեզվական միջոցները, որոնք գործի են դրվում որմնագրային տեքստի ստեղծման գործընթացում, իրենց հերթին ձեռք են բերում իմաստային և գործաբանական նոր առանձնահատկություններ և ձևավորում որմնագրային խոսույթը որպես զանգվածային հաղորդակցության միջոց՝ իրեն հատուկ հաղորդակցական կաղապարում:
- Լեզվական միջոցների և հնարների ընտրությունն ու կիրառումը որմնագրային խոսույթում կամայական գործընթացներ չեն, չնայած այն բանին, որ որմնագրության ստեղծումն ինքնին շատ հաճախ տարերային և ինքնաբուխ գործողություն է: Գոյություն ունեն որմնագրային խոսույթին հատուկ լեզվի գործադրման և լեզվական միջոցների կիրառման մի շարք օրինակափություններ:
- Որմնագրային խոսույթը սահմանափակ է ժամանակային և տարածական առումներով, ուստի նրանում օգտագործված միջոցներն ու հնարները առավելապես միտված են հաղթահարելու վերոնշյալ սահմանափակումները և բովանդակայից, իմաստային առումով ընդգրկուն և համոզիչ հաղորդագրություն փոխանցելու: Ժամանակային և տարածական սահմանափակումներով պայմանավորված՝ յուրաքանչյուր որմնագրային նմուշ պարունակում է հաղորդակցական և հայեցակարգային կենտրոններ, որոնց քննությունը պետք է լինի այն ելակետը, որից սկսվում է որմնագրային այս կամ այն նմուշի ուսումնասիրությունը:
- Որմնագրային խոսույթը ձևավորող ամենաակնառու միջոցներից և մեխանիզմներից են պայմանականությունը (նպատակ ունի ընթերցողի և հասցեատիրոջ միջև հաղորդակցական համագործակցությունը խթանելուն), հակադրությունները (միտված են երկու կամ ավել երևույթների միջև տարբերությունները վեր հանելուն և ընթերցողի ուշադրությունը դրանց վրա բևեռելուն), միջտեքստայնությունը (խոսքն ավելի պատկերավոր, ազդեցիկ և միևնույն ժամանակ հակիրճ դարձնելու նպատակով), փոխաբերությունները (լսարանի վրա զգայական ազդեցություն ունենալու և հաղորդագրությունը անուղղակիորեն փոխանցելու նպատակով):
- Որմնագրային հաղորդակցության ընթացքում ձևավորված հաղորդակցական մոդելի բաղադրիչներն ունեն իրենց բնորոշ բովանդակային առանձնահատկությունները, իսկ իր կառուցվածքով այս մոդելը կարող է լինել ինչպես գծային, այնպես էլ երկխոսական և գործարքային:

- *Ազդեցությունը* որմնագրային հաղորդակցության մոդելի պարտադիր բաղադրիչ տարր է, որը տարբերում է այն հաղորդակցության մյուս մոդելներից և պայմանավորում հաղորդագրության կառուցվածքը և բովանդակությունը: Ազդեցության ուժգնությունը մեծապես կախված է հեղինակի կողմից կիրառված լեզվի առանձնահատկություններից, այն համատեքստից, որում հայտնվում է որմնագրային նմուշը, հեղինակի հաղորդակցական նպատակից, ինչպես նաև այն հանգամանքից, թե ինչպես է հեղինակը փոխանցում հաղորդագրությունը (*ուղղակիորեն* կամ *անուղղակիորեն*): Սույն մոդելի բաղադրիչները սերտ փոխկապակցված են միմյանց հետ, մինչդեռ վերջինիս կառուցվածքային զարգացումը գծայինից երկխոսականի կամ գործարքայինի հարաբերական է և կախված է հաղորդագրությունը ընդունողից և նրա վրա ունեցած ազդեցությունից:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝**

1. Graffiti as a linguistic phenomenon: different theoretical approaches // *Օլտար լեզուները բարձրագույն դպրոցում*, 1 (28), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020, էջ 39-51:
2. The study of graffiti from multimodal communication perspective // «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու, 11 (02), Երևան, Եվրոպական համալսարանի հրատարակչություն, 2020, էջ 412-423:
3. English textual graffiti in the light of critical discourse analysis // *Լրաբեր Հայ-Ռուսական համալսարանի, սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ*, (36), №3, ՀՌՀ հրատարակչություն, 2020, էջ 105-119:
4. English textual graffiti in the context of language functions // *Օլտար լեզուները բարձրագույն դպրոցում*, 2 (29), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020, էջ 13-25 (համահեղինակ՝ Ե. Երզնկյան):
5. Mapping the model of communication through graffiti // *Օլտար լեզուները բարձրագույն դպրոցում*, 1 (30), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջ 15-30:
6. Graffiti as a form of rhetoric // *Armenian Folia Anglistika*, Vol. 17, 1 (23), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջ 9-23, (համահեղինակ՝ Ե. Երզնկյան): <https://doi.org/10.46991/AFA/2021.17.1.009>.

**Гриша Гагикович Гаспарян**  
**Английское текстовое граффити как модель массовой коммуникации**

**Резюме**

Данная работа посвящена комплексному изучению английского граффити-дискурса, который рассматривается как система текстов, служащая для установления коммуникации между различными слоями общества и направленная на то, чтобы убедить аудиторию в верности высказываемых идей и оказать на нее определенное коммуникативное воздействие.

**Актуальность** исследования в первую очередь обусловлена тем, что в современном мире, на фоне обострения общественно-политических, культурных и злободневных проблем, граффити как средство коммуникации приобретает все большую популярность. Люди не перестают поднимать волнующие их вопросы с помощью текстовых/вербальных и графических/визуальных средств с использованием различных обозримых общественных плоскостей. Изучение граффити как комплексной текстовой деятельности позволяет выявить характерные особенности языковых средств и механизмов, передающих смысл текста, а также раскрыть их роль в формировании граффити-дискурса и оценить степень их воздействия на широкий круг читателей.

**Объектом** исследования являются образцы английских текстовых граффити, взятых из различных физических и социальных контекстов.

**Предметом** исследования является граффити-дискурс как уникальное средство массовой коммуникации, формирующее своеобразную коммуникативную модель.

Настоящая диссертационная работа преследует следующие основные **цели**: определить формирующие английский граффити-дискурс лингвистические и экстралингвистические средства, которые способствуют реализации функции убеждения, и выявить основные структурные и содержательные характеристики модели граффити коммуникации.

Для достижения указанных целей в работе ставятся следующие **задачи**:

- а. изучить различные теоретические концепции граффити и выявить основные тенденции его изучения как лингвистического явления;
- б. исследовать граффити как особый тип дискурса, выполняющий функцию убеждения, рассматривая его: а) в контексте языковых функций; б) с точки зрения стратегий убеждения, предложенных Аристотелем; в) в свете критического дискурса-анализа;
- в. выявить наиболее распространенные лингвистические и экстралингвистические средства и приемы, широко используемые в процессе смыслообразования текста граффити, определить их прагматические особенности, а также классифицировать в соответствии с их структурными, семантическими и функциональными характеристиками;
- г. предложить интегративную модель анализа текста граффити, учитывающую его внутренние взаимосвязи;
- д. построить модель граффити коммуникации, определить ее основные структурные характеристики с учетом возможных трансформаций линейной модели в интерактивную и транзакционную.

Научная **новизна** исследования во многом определяется тем, что в работе впервые предпринята попытка всестороннего анализа прагмасемантических характеристик текстов английских граффити, не ограничивая его изучение каким-либо социальным или физическим контекстом. Таким образом раскрываются средства передачи смысла в граффити-дискурсе и очерчивается коммуникативная модель, возникающая посредством граффити как способа коммуникации. Построение модели коммуникации граффити можно рассматривать как новую ступень в развитии теории коммуникации, подчеркивающую важность включения коммуникативного компонента воздействия, который служит отправной точкой для раскрытия мотивов и целей, лежащих в основе процесса коммуникации.

**Теоретическая значимость** исследования обусловлена тем фактом, что его результаты определяют граффити как текстовую практику и как средство массовой коммуникации. Положения, разработанные в диссертации, могут способствовать дальнейшей разработке в области семантики, прагматики, теории коммуникации, лингвистики текста, функциональной стилистики.

Результаты работы также имеют **практическую ценность**. Ее основные положения могут найти применение в теоретических курсах семантики, лексикологии, прагматики, лингвистики текста, социолингвистики, функциональной стилистики, а также при написании научных статей, курсовых и дипломных работ.

**Фактический материал** исследования составляют около 4000 образцов английских текстовых граффити, взятых из различных социальных и физических контекстов, из Интернета, а также собранных автором с течением времени.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и библиографии.

## **Grisha Gagik Gasparyan** **English Textual Graffiti as a Model of Mass Communication** **Summary**

Within the framework of this study, graffiti discourse is viewed as a complex system of texts consisting of linguistic and non-linguistic means, which is meant to set up communication between different layers of the society. We proceed from the conviction that graffiti is primarily intended to persuade the audience of the ideas expressed and to have a communicative impact on them.

The **topicality of the research** is primarily provided by the fact that in the modern world, against the background of the socio-political, cultural and other increasing problems and notable events, graffiti is getting more and more popularity. People do not cease to raise issues that concern them through textual and/or pictorial combinations using various public surfaces. The examination of graffiti as a complex textual practice allows us to reveal the characteristic features of the linguistic means and techniques that convey the meaning of the text as well as to disclose their role in shaping graffiti discourse and to assess their impact on a wide range of readers.

The **object of the research** is English textual (or textual-pictorial) graffiti samples taken from a variety of physical and social contexts.

The **subject matter of the research** is graffiti discourse as a unique means of mass communication that shapes a distinctive communicative model when processed by different members of the society.

The present research paper pursues the following **goals**: to study the linguistic and



extra-linguistic means that form English graffiti discourse and help the author to reach persuasion as well as to reveal the main structural and contentual characteristics of the communicative model that graffiti shapes.

In order to achieve the goals, the following **objectives** have been set forth:

- a. to study the basics of the theoretical concept of graffiti as well as to reveal the main tendencies of the linguistic study of graffiti;
- b. to consider graffiti as a discourse that performs the function of persuasion, viewing it:  
a) in the context of language functions, b) according to the persuasion strategies proposed by Aristotle and c) in the light of Critical Discourse Analysis;
- c. to identify the most prominent linguistic and extra-linguistic means and techniques that realize the meaning-making process, to reveal their pragmasemantic properties, to classify them according to their structural, semantic and functional characteristics;
- d. to propose an integrative model of graffiti text (and/or image-text combination) analysis, which will consider the internal relationship of the communication modes forming the piece of graffiti;
- e. to map and introduce the model of communication formed by graffiti, to point out the main features of the components of this model, to specify its structural characteristics and the changes occurred in the communicative process.

The **scientific novelty** of the research is largely conditioned by the fact that for the first time an attempt is made to examine the semantic characteristics of English graffiti texts comprehensively without restricting the study of graffiti pieces with any social or physical context. In such a way the means of conveying meaning in graffiti discourse are revealed and the communicative model that emerges when people prefer to voice their thoughts using graffiti is outlined. The mapping of the graffiti communication model can be regarded as a new development in the theory of communication that emphasizes the significance of the *effect* as a communicative component and as a starting point for uncovering the motives and aims underlying the communication process.

The **theoretical significance** of the research is illustrated by the fact that the results of the research value graffiti as a textual practice and as a means of mass communication. The provisions developed in the thesis can contribute to the researches in the fields of semantics, pragmatics, theory of communication, text linguistics, functional stylistics.

The results of the study are of **practical value** as well. This is evidenced by the fact that the main findings of the research can be applied in the courses of semantics, lexicology, pragmatics, text linguistics, sociolinguistics, functional stylistics, as well as in writing scientific articles, bachelor's and master's theses.

Around 4000 samples of the English textual graffiti pieces (sometimes accompanied by an image) taken from a variety of social and physical contexts constitute the **factual material of the study**. The pieces of graffiti have been collected both from the Internet and from the personal database created by the author in the course of time.

The thesis consists of an introduction, three chapters with relevant sub-chapters, Conclusion and Bibliography.

